ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Թիվ -107-

23.12..2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն՝ Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան
Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Գոգարան գյուղական համայնքի ավագանու թիվ 27 , 28 և 29-Ն որոշումները :

Առդիր՝ 23 թերթ :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«22» դեկտեմբերի 2016 թվականի N 27

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 07.12.2016թ, թիվ 97 դրական եզրակացությունը, համայնքի ավագնին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Լոռու մարզի Գոգարան համայնքի վարչական տարածքում գտնվող, Գոգարան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող, 06-030-0505-0002-01 ծածկագրից 0,01 հա մակերեսով (3 հողակտոր՝ ընդամենը 0,03 հա), գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կոմունալ օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ապահովել իրավունքների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեուում և համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն:

	Համայնքի ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
1	ԳԱԼՈՅԱՆ ԳԱՐԻԿ			
2	ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ			
3	ՀԱԼԱՋՅԱՆ ԵՂԻՇԵ			
4	ՄԱՐՈՒՔՅԱՆ ԿԱՐԵՆ			
5	ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ			

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք,հասցե՝1-ին փողոց,31/1
Հեռախոս՝0255-6-06-04,էլ.փոստ՝.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 22 » Դեկտեմբեր 2016 թվականի N 28

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին ,, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով,համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 25-ի ,, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Գոգարան համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին ,, թիվ 12-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման,զինծառայությունից արձակվածների , պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման,հաշմանդամների , կերակրողին կորցրած ընտանիքների , սոցիալական այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Գոգարան համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ՝	*Կողմ*	*Դեմ*	*Ձեռնպահ*
ԳԱԼՈՅԱՆ ԳԱՐԻԿ			
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ			
ՀԱԼԱՋՅԱՆ ԵՂԻՇԵ			
ՄԱՐՈՒՔՅԱՆ ԿԱՐԵՆ			
ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ

(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Կ.Տ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Գոգարան համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 28 որոշման

Ց Ո Ւ Ց Ա Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Զատուրյան Հրաչ 50,0 հազար դրամ
/ Անուն,ազգանուն,հայրանուն/

2.Հովհաննիսյան Ֆլորան 35,0 հազար դրամ
/Անուն,ազգանուն,հայրանուն/

3.Մինասյան Սիմոն 30,0 հազար դրամ
/Անուն,ազգանուն,հայրանուն/

4.Իսայան Սարգիս 35,0 հազար դրամ
/Անուն,ազգանուն,հայրանուն/

5.Սահակյան Գրիգոր 10,0 հազար դրամ
/Անուն,ազգանուն,հայրանուն/

6.---------- հազար դրամ
/Անուն,ազգանուն,հայրանուն/

7.---------- հազար դրամ
/Անուն,ազգանուն,հայրանուն/

8.---------- հազար դրամ
/Անուն,ազգանուն,հայրանուն/

9.---------- հազար դրամ
/Անուն,ազգանուն,հայրանուն/

10.---------- հազար դրամ
/Անուն,ազգանուն,հայրանուն/

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 160,0 հազար դրամ

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք, հասցե 1-ին փողոց 31/1,
Հեռախոս՝ 0255-6-06-04
Էլ.Փոստ՝ gogaran.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 22 » դեկտեմբերի 2016 թվականի N 29-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017-2021ԹԹ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Գոգարան գյուղական համայնքի ավագանին՝

Որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնքի ղեկավար՝ Արթուր Գալոյանի կողմից ներկայացված 2017-2021 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը և այն ընդունել , որպես հիմնական փաստաթուղթ առաջիկա հինգ տարիների աշխատանքային գործունեության համար :

Համայնքի ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
ԳԱԼՈՅԱՆ ԳԱՐԻԿ			
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ			
ՀԱԼԱՋՅԱՆ ԵՂԻՇԵ			
ՄԱՐՈՒՔՅԱՆ ԿԱՐԵՆ			
ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ			

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ
(ստորագրություն) (Անուն,ազգանուն)

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԳՈԳԱՐԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 թթ. ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմեց համայնքի ղեկավար՝ Ա. Գալոյանը
Քննարկվել է համայնքի ավագանու նիստում

22.12.2016 թ. 29-Ն որոշմամբ

2017թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք.....3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն.....4
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն.....4
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը.....4
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը.....4
2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները.....5
2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ.....6
2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի , հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն.....6
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում.....8
3.1. Համայնքի զարգացման տեսլական.....8
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ.....8
4. ՀՀԶԾ ֆինանսավորում.....10
5. ՀՀԶԾ մոնիթորինգ.....11

1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Գոգարան համայնքի զարգացման հնգամյա ծրագիրը :

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման , ինչպես նաև բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է :

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը , վերլուծությունը և գնահատումը , համայնքի տեսլականը , ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը , նախատեսվող հանրապետական և մարզային , միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը , զարգացման ծրագրի մոնիթորինգը , ֆինանսական իրավիճակի վերլուծությունը և այլն :

Համայնքում առկա հիմնախնդիրները

.Բնակչության սոցիալապես անապահով վիճակ (60 %-70 %)

.համայնքի բնակչության զգալի մասը գործազրկության պատճառով մեկնում է արտագնա աշխատանքի

.հաճախակի են լինում երաշտի և կարկտահարության տարիներ , որից գյուղացիները կորցնում են բերքի մոտ 50 % - ը

. համայնքում մանկապարտեզի շենքի բացակայություն

.համայնքում գործող միջնակարգ դպրոցը չունի սպորտ դահլիճ

.համայնքը չունի մշակույթային կենտրոններ

. համայնքի խմելու ջրի ներքին ցանցը գտնվում է անմխիթար վիճակում

.կենցաղային աղբահեռացման բացակայություն

Լուծման ուղիները

.Լրացուցիչ ֆինանսական միջոցների ներկրում

.Կոոպերատիվների ստեղծում և ընդլայնում

.հանրային մասնակցություն

.համագործակցություն միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր աշխատակիցները և համայնքի ավագանին : Քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները : Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու կողմից :

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Գոգարան համայնքը գտնվում է Լոռու մարզում , Սպիտակի տարածաշրջանում՝ Բազումի լեռնաշղթայի ստորոտում : Սահմանակից է Սարահարթ և Շիրակամուտ համայնքներին : Համայնքը հիմնադրվել է 1780 թվականին , ներկայիս տեղում : Ծովի մակարդակից բարձր է 1864 մետր , վարչական տարածքը կազմում է 5734.91 հա , որից համայնքի բնակատեղը 94 հա: Տարվա եղանակներից անհամեմատ լավն է աշունը , ձմեռը երբեմն խստաշունչ է , գարունը սովորաբար ուշա- ցած է գալիս , իսկ ամառը տաք է՝ հաճախակի քամիներով :

Տարեկան տեղումները քիչ են , լինում են կարկտահարություններ :

Գյուղը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում : Հիշարժան են 1926 թ. , 1967 թ. և 1988 թ. երկրաշարժերը :

Վերջինիս էպիկենտրոնը գտնվում է Գոգարանի վարչական տարածքում :

Համայնքի բնակչության առկա թիվը՝1174

Այդ թվում՝

0-1տարեկան- 24
1-2 տարեկան- 41
3-4 տարեկան-46
5-6 տարեկան-52
7-10 տարեկան-52
11-14 տարեկան-87
15-17 տարեկան-77
18-22 տարեկան-104
23-45 տարեկան-302
46-62 տարեկան-288
63 և ավելի-101
Թոշակառուներ-162
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ-9
Հաշմանդամ երեխաներ-4
Հայրենական պատերազմի մասնակիցներ-1
Ընտանիքների ծխերի թիվը-333

2.2. Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 28.195 մլն դրամ

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 5.139 մլն դրամ

.Ստորև բերված են համայնքի հիմնական՝ արդյունաբերական ձեռնարկությունների եկամուտները՝

Ձեռնարկություններ	Քանակը	Եկամուտներ /հազ.դր/
Կոոպերատիվ	1	35 000
Խանութներ	3	45 000

.Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016 թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	52 հա	119 տ
կաղամբ	1.3 հա	5.2 տ
բանջարեղեն	3.4 հա	2.5 տ
գարի	147 հա	55.56 տ
ցորեն	142 հա	45.44 տ
միս		170 տ
բուրդ		3.5 տ
ձու		75 հազ. հատ
մեղր		5տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջրավոր անասուններ	587
Այդ թվում կովեր	270
Մանր եղջրավոր անասուններ	732
Այդ թվում մայրեր	483
Խոզեր	10
Այդ թվում մայրեր	10
Թռչուններ	798
Այդ թվում հավեր	693
Մեղվաընտանիքներ	140

.Համայնքում գործում է միջնակարգ դպրոց , որտեղ սովորում են 152 աշակերտ
Դպրոցն ունի 31 աշխատող
.Համայնքում գործում է մեկ բուժ.կետ , աշխատողների թիվը `1 , որն սպասարկում է 1174 բնակիչ
.Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 152 ընտանիք
.Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է 38 % :

Գոգարան համայնքում գործում է զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող չորրորդ դարի եկեղեցի , որը ունի թեավոր խաչքար :

2.3.Համայնքում իրականացվող ծրագրերը

.Համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսված են մարզային առարկայական օլիմպիադաներ և ռազմա-մարզային խաղեր , որոնց մասնակցում են համայնքի լավագույն աշակերտները :
. «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի աջակցությամբ համայնքում ստեղծվել է կոոպերատիվ , որը զբաղվում է ոչխարաբուծությամբ , ինչպես նաև տրամադրվել է գյուղատնտեսական մեխանիզացիաներ : Առաջիկա տարիներին նախատեսված է իրականացնել մոնիտորինգներ :
. «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամի կողմից ստեղծված կոոպերատիվը կմեծացնի համայնքի բնակիչների աղքատության տոկոսը :
.Հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսվում է լուծել հասարակական տրանսպորտի խնդիրը :

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը Եկամուտներ	28.2 մլն	30.29 մլն	31.8 մլն	33.7 մլն	35.3 մլն
Ա	Հարկային եկամուտներ	5.1 մլն	5. 2 մլն	5.4 մլն	5.5 մլն	5.7 մլն
1	Հողի հարկ	2.7 մլն	2.7 մլն	2.7 մլն	2.7 մլն	2.7 մլն
2	Գույքահարկ	2.3 մլն	2.6 մլն	2.8 մլն	3.0 մլն	3.2 մլն
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	36 հազ	36 հազ	36 հազ	36 հազ	36 հազ
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Վարձավճարներ	749.6 հազ	750.0 հազ	752.3 հազ	756.4 հազ	760.1 հազ
2	Տեղական վճարներ					
3	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Դ	Դոտացիա	22.3 մլն	23.0 մլն	24.1 մլն	25.2 մլն	25.2 մլն
Ե	Եկամուտներ կապիտալ գործառույթներից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Գոգարան համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝
Համայնքի բնակչության 80 %-ը գտնվում է սոցիալապես վատ պայմաններում :
1 / Գործարար միջավայրի բարելավմանը և ձեռնարկատիրության խթանմանը խոչընդոտող գործոններ են՝
. ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման դժվարությունները
. բնակչության գործարար ոլորտի գիտելիքների պակասը
. ֆինանսի բացակայությունը
2/ Նախադպրոցական կրթության կազմակերպման խոչընդոտներն են ծնողական ներդրումների դժվարությունները
3/ Համայնքի բնակչության սոցիալական պաշպանությանը խոչընդոտող գործոններն են՝
. գործազրկությունը
. խմելու ջրի անորակությունը / մանրեազերծման , ֆիլտրման բացակայությունը /
4/ ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են
. սպորտ հրապարակ , մարզադահլիճ և մարզագույք չունենալը

5/ Համայնքում բնակարանային շինարարության խթանմանը խոչընդոտող գործոններն են բնակիչների աղքատությունը
6/ Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
. ոռոգման ջրի պակասությունը
. ոռոգման ջրագծի քայքայված վիճակը
. ոռոքման ցանցի բացակայությունը որոշ տեղերում
. սպառման շուկայի դժվար հասանելիությունը
. գլխավոր մայրուղուց հեռու լինելը
7/ Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝
. հեղեղատարների բացակայությունը
. աղբահանություն չկատարելը
8/ Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Գոգարան համայնքում զբոսաշրջության զարգացման խոչընդոտող գործոններն են՝
. համայնքի հեռավորությունը մայրաքաղաքից
. գովազդի բացակայությունը
. տուրիստական գործակալությունների հետ կապ չունենալը
9/ Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
. երիտասարդների չամուսնանալը
. երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը
10/ Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացմանը , արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝
.բնակչության իրազերկվածության պակասը , բուժ. գործիքների պակասը
11/ Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝
. համայնքում համապատասխան պայմաններ չունենալը

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/ հաճախակի են լինում երաշտի տարիներ, որից գյուղացիները կորցնում են բերքի 50%-ը,

բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստ հիմնական միջոցն ստացվում է բանջարա-բոստանային մշակաբույսերից,

գ/ հնարավորություն չունեն որակյալ սերմեր և վառելանյութ ձեռքբերելու,

դ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,

ե/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

զ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները

է/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների: Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում,

բ/ վտանգ կա, որ կեղտաջրերը կարող են խառնվել խմելու ջրին,

գ/ ջուրը հավասարաչափ չի բաշխված, ուստի բնակչության մի մասը հաճախ զրկվում են ջրից,

դ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր	*Համայնքի թույլ կողմեր*
.Միջնակարգ դպրոցի առկայություն. .Բերրի հողերի առկայություն .Հեռահաղորդակցության առկայություն .Գազաֆիկացման առկայություն .Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող հնություններ .Ողղակի ընտրությամբ ղեկավար ընտրելու հնարավորություն	.Ոռոգման ցանցի բացակայություն .Խմելու ջրի ցանցի անմխիթար վիճակ .Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ .Ֆինանսական ռեսուրսների բացակայություն .Ծնելիության նվազում .Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ .Թերզբաղվածության բարձր մակարդակ .Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ .Տրանսպորտային ցանցի բացակայություն

	.Աշխատատեղերի պակաս
Հնարավորություններ	*Սպառնալիքներ*
.Ոռոգման ջրի պաշարի առկայություն .Խմելու ջրի պաշարի առկայություն .Պետական և միջազգային ծրագրերի մեջ ընդգրկվածություն .Բերրի հողերի առկայություն .Տուրիստական հետաքրքրություն ներկայացնող վայրեր	.Տարերային աղետների վտանգ .Գյուղ. մթերքների գների նվազում .Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն .Սպառման շուկաների դժվար հասանելիություն .Տրանսպորտային հանգույցների դժվար հասանելիություն .Խիստ կլիմա /ցրտահարություն/ .Արտագաղթ. Հիվանդությունների առաջացման վտանգ

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ, և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները, և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:
- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 10%-ով,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 30%-ով աճի,

Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 3%-ով աճի:

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1/ Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:

2/ Համայնքի գույքը կառավարել:

3/նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:

4/Ակտիվ մշակութային նմարզականկյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:

5/Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:

6/Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:

7/Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:

8/Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը: Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը կազմակերպել,

9/Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:

10/Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:

11/Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:

12/Գյուղատնտեսության զարգացումը խթանել:

13/Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:

14/Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Անգեղակոթ համայնքում զբոսաշրջության զարգացումը խթանել:

15/Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:

16/Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:

17/Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:

18/Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:

19/Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:

ԾՐԱԳԻՐ 1

Գոգարան համայնքում կոմունալ տնտեսության աշխատանքները կազմակերպելու նպատակով կիրականացվի «**Խմելու ջրի ներքին ցանցի վերակառուցում**» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1.Վերանորոգված խմելու ջրի գործող ջրագիծ, կառուցված և կանոնակարգված ջրի բաշխում

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել խողովակներ 7 կմ-ի համար :

1.2.Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:

1.3. Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ:

1.4. Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդկենտրոնի օգնությամբ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 5%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Գոգարան համայնքի բոլոր 1354 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Ներկայումս համայնքում ջուրը հավասարաչափ չի բաշխված, ջրի քանակը չի բավարարում բոլորին և ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում : Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով:

Ծրագրի բյուջեն կազմում է՝ 75 մլն դրամ :

ԾՐԱԳԻՐ 2

Գոգարան համայնքում հասարակական տրանսպորտի աշխատանքի և համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանման և շահագործման նպատակով կիրականացվի «**Ճանապարհների բարեկարգում**» ծրագիրը:Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1.Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.3.Կատարել դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում:

1.4.Հեղեղատարներ կառուցել:

1.5.Ներհամայնքային ճանապարհների լուսավորություն անցկացնել:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Գոգարան համայնքի բոլոր 1354 բնակիչները : Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, մրցույթ հայտարարել ճանապարհաշինարարական աշխատանքներ կատարող կազմակերպություն գտնելու նպատակով: Ստանալ համապատասխան գումարը, փոխանցել գումարն ընտրված կազմակերպությանը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում : Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթևեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի: Ծրագրի բյուջեն կազմում է՝ 15 մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 3

Գոգարան համայնքում գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման նպատակով կիրականացվի **«Բրդի վերամշակում և բրդյա գործվածքների արտադրություն»** ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ հավելյալ եկամուտի աճը:

Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1. Վերամշակված բուրդ, բրդյա թել,
2. Բրդյա գործվածքներ, գորգեր

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Տրամադրել շինություն, այն համապատասխանեցնել պահանջներին:

Կատարել վերանորոգման աշխատանքներ, անցկացնել ջեռուցում:

1.3. Ձեռք բերել բուրդ լվացող մեքենա, բուրդ զգող սարքեր, բուրդ մանող մեքենա:

1.4. Մեքենաները աշխատացնող աշխատողներին վերապատրաստել:

1.5. Կատարել պետական գրանցում:

1.6. Սկսել բնակիչներից բրդի հավաքումը և լվացումը:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ

2.1. Սկսել բրդի վերամշակումը:

2.2. Կատարել թելի մանումը, ներկումը:

2.3. Ձեռք բերել գորգագործական դազգահներ և անհրաժեշտ գործիքներ:

2.4. Սկսել գորգագործություն և բրդյա գործվածքների արտադրություն:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, տրանսպորտ, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը:

Ծրագրի հիմնական շահառուներն են Գոգարանի և հարևան համայնքների բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.:

Ծրագրի համառոտ նկարագրություն.

Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները :Կատարել համայնքային ներդրումներ : Այժմ համայնքի զգալի մասը համայնքաբնակ գործազուրկ է : Ծրագրի իրականացումից հետո համայնքի մի շարք բնակիչներ կապահովվեն աշխատանքով , գործարար միջավայրը կբարելավվի և համայնքի բնակիչները կունենան եկամուտի հավելյալ աճ : Ծրագրի բյուջեն կազմում է՝ 26 մլն դրամ :

ԾՐԱԳԻՐ 4

Գոգարան համայնքում հասարակական կյանքի բարելավման և աշխատանքների արդյունավետության նպատակով կիրականացվի **«Համայնքային կենտրոնի կառուցում»** ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքի բնակիչների բարեկեցիկ կյանքի ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1.Կառուցված շինություն , որը կհամապատասխանի ազգաբնակչության պահանջներին

2. Շինությունը իր մեջ կներառի համայնքապետարան , բուժ. կետ և ժամանցի կենտրոն ,

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1 Շենքի շինարարության համար հատկացնել տարածք :

1.2 Կատարել համապատասխան շինարարական աշխատանքներ :

1.3 Ձեռք բերել կահավորման համար անհրաժեշտ գույք:

1.4 Տեղադրել ջեռուցման համակարգ :

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, տրանսպորտ, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 5%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Գոգարան համայնքի բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.: Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Ծրագրի իրականացումից հետո կբարելավվի համայնքապետարանի աշխատանքը և կբարձրանա բնակիչների կենսական մակարդակը: Ծրագրի բյուջեն կազմում է՝ 40 մլն դրամ :

4. ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

5. ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի:

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 1

« Որակյալ խմելու ջրով ապահովում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գոգարան համայնքում կազմակերպել կոմունալ տնտեսության աշխատանքները:						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով						
	Ցուցանիշներ աճ (%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	102	105	110	120	150
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Վերանորոգված խմելու ջրի գործող ջրագիծ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	3	7	7	7	7
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1 Ձեռք բերել խողովակներ 7 կմ-ի համար 1.2. Գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով: 1.3.Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ: 1.4. Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդկենտրոնի օգնությամբ:						
Ծրագրի բյուջեն	Ընդհանուր բյուջեն՝75 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Գոգարան համայնքի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներկայումս համայնքում ջուրը հավասարաչափ չի բաշխված, ջրի քանակը չի բավարարում բոլորին և ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐՔ

«Ճանապարհների բարեկարգում»

(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գոգարան համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի և համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում						
Ծրագրի անմիջական նպատակ	Համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովում:						
	Ցուցանիշներ աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	105	110	115	125	140
Ծրագրիմիջանկյալ արդյունքներ	1. Բարեկարգված միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհներ						
	Ցուցանիշներ կմ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		1	5	7	9	13	15
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում: 1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում: 1.3.Կատարել դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում: 1.4.Հեղեղատարներկառուցել: 1.5.Ներհամայնքային ճանապարհների լուսավորություն անցկացնել:						
Ծրագրի բյուջեն	Ընդհանուր բյուջեն՝ 15 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, մեխանիզացիա, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Գոգարան համայնքի բոլոր բնակիչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրիհամառոտ նկարագրություն	Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում : Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթևեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 3

«Բրդի վերամշակում և բրդյա գործվածքների արտադրություն»

(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	**Գործարար միջավայրի բարելավում և ձեռնարկատիրության խթանում**						
Ծրագրի անմիջական նպատակ	Հավելյալ եկամուտի աճ						
	Ցուցանիշներ աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	110	120	130	140	150
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Բրդի վերամշակման արտադրամաս						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	1	1	1	1	1
	2. Բրդյա իրերի արտադրություն						
	Ցուցանիշներ Աճ (%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	100	130	150	100	100
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Տրամադրել շինություն, այն համապատասխանեցնել պահանջներին: 1.2. Կատարել վերանորոգման աշխատանքներ, անցկացնել ջեռուցում: 1.3. Ձեռք բերել բուրդ լվացող մեքենա, բուրդ զզող սարքեր, բուրդ մանող մեքենա: 1.4. Մեքենաները աշխատացնող աշխատողներին վերապատրաստել: 1.5. Կատարել պետական գրանցում: 1.6. Սկսել բրդի հավաքումը և լվացումը: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1. Սկսել բրդի վերամշակումը: 2.2. Կատարել թելի մանումը, ներկումը: 2.3. Ձեռք բերել գորգագործական դազգահներ և անհրաժեշտ գործիքներ: 2.4. Սկսել գորգագործություն և բրդյա գործվածքների արտադրություն:						
Ծրագրի բյուջեն	Ընդհանուր բյուջեն՝ 26 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, տրանսպորտ, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Գոգարան համայնքի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Այժմ համայնքի բնակիչների զգալի մասը գործազուրկ է: Ծրագրի իրականացումից հետո համայնքի մի շարք բնակիչներ կապահովվեն աշխատանքով, գործարար միջավայրը կբարելավվի և համայնքաբնակները կունենան եկամուտի հավելյալ աճ:						

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ 4

«Համայնքային կենտրոնի կառուցում»

(Ծրագրիանվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Գոգարան համայնքում հասարակական կյանքի բարելավում						
Ծրագրի անմիջական նպատակ	Հասարակական կյանքի ակտիվացման ապահովում:						
	Ցուցանիշներ աճ(%)	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		100	110	120	130	140	150
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1. Կահավորված և ջեռուցվող համայնքային կենտրոն						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	1	1	1	1	1
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1. Շենքի շինարարության համար հատկացնել տարածք 1.2. Կատարել համապատասխան շինարարական աշխատանքներ 1.3.Ձեռք բերել կահավորման համար անհրաժեշտ գույք 1.4. Ջեռուցման համակարգը տեղադրել:						
Ծրագրի բյուջեն	Ընդհանուր բյուջեն՝ 40 մլն դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Աշխատուժ, տրանսպորտ, դրամական միջոցներ						
Ծրագրի հիմնական ռիսկերը	դրամական միջոցների ձեռքբերումը						
Ծրագրի հիմնական շահառուները	Գոգարան համայնքի բոլոր բնակիչները:						
Ծրագրի սկիզբ և ավարտ	Սկիզբ՝ 2017թ.- Ավարտ՝ 2021թ.						
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ծրագրի իրականացումից հետո կբարելավվի Գոգարանի համայնքապետարանի աշխատանքը և կբարձրանա բնակիչների կենսական մակարդակը :						